ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

XX դ. հայ պատմավիպասանության ականավոր ներկայացուցիչներից է Հայկ Խաչատրյանը: Որպես ստեղծագործող՝ նա զգալի դեր ունի նաև մեր լեզվի հարստացման բնագավառում. կերտել է բազմաթիվ բառեր[1], որոնց քննությանն է նվիրված սույն հոդվածը:

Գեղարվեստական խոսքում հեղինակային նորակազմությունները տվյալ լեզվի ներքին միջոցներով կերտված բառեր են, որոնք ունեն գեղարվեստական նպատակադրում: Նոր բառեր կազմելն անշուշտ ստեղծագործական բարդ աշխատանք է, դրա հաջողության համար անհրաժեշտ է լեզվի խոր իմացություն և կազմած բառերի նպատակային, դիպուկ կիրառություն:

Հեղինակային նորակազմությունների ուսումնասիրության դժվարությունը կապված է բառարանների հետ. նախ՝ չկա հայերեն այնպիսի լիակատար բառարան, որի համեմատությամբ հնարավոր լիներ որոշել այս կամ այն հեղինակի կազմած բոլոր բառերը, և ապա՝ եղած առավել ընդարձակ բառարաններն ընդգրկում են մինչև անցած դարի 80-ականները գործածված բառերը, և վերջին տարիներին բառապաշարում կատարված փոփոխություններն արտացոլող ընդարձակ բառարաններ չունենք: Հեղինակային նորակազմությունների վերաբերյալ բառարանների ստեղծումը դժբախտաբար դեռ նոր երևույթ է հայ լեզվաբանության ասպարեզում, և լույս տեսած նման տիպի աշխատություններն ընդգրկում են գեղարվեստական գրականության մեջ ստեղծված բառերի մի փոքր մասը:

Հ.Խաչատրյանի կերտած բառերը կառուցվածքային ու ոճական կիրառության տեսակետից որոշակի առանձնահատկություններ ունեն: Ըստ կառուցվածքի գերակշռում են երկարմատ բարդությունները: Դրանցից են՝ անձրևա-

---

[1] Համեմատված են հետևյալ բառարանների հետ՝ ա) Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, 4հ., Եր., 1944-45թ.թ., բ) Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (վերահրատ.), 1971-80թ.թ., 4հ., Եր. պետհամ. հրատ., գ) ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 4հ., 1969-81թ.թ., դ) Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., 1973թ., ե) էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 2հ., Եր., 1976թ., զ) Նոր բառգիրք հայկազեան լեզուի(վերահրատ.), 2հ., Եր. պետհամալս. հրատ., 1979-81թ.թ., է) Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր.,2002թ.:

ցույց(1,112), առյուծապահ (1,245), ասորագիր (2,178), աստվածաշար (3,121), արդարանուն (4, 38), արևանախշ (5,204), գարեթույր (6,4), գինետակառ (7,568), գյուղանուն (3, 86), դափնեոստ (8,246), դեղձաշատ (9,113), եռադահլիճ (2, 55), թռչնապար (2,138), ժայռագմբեթ(10,278), և այլն:

Հեղինակը բառակերտման նպատակով գործածել է նաև զգալի թվով բառակազմական երկրորդական ձևույթներ, որոնց համակարգում գերակշռում են *-ական*, *-արան*, *-ել*, *-ություն*, *-ում* ածանցները, ինչպես՝ անձրևասիրություն (1, 112), ասորախոսություն(2,35), բերդօղակում(7,277), բքաստան (1,192), գաղտնաթափվել (5, 102), գանձախցոնք (5, 394), գերլսող (8, 3), գերփայլ (11,27), գոհարամոլություն (2,132), երազարար (11,340), երկբառանոց (5, 23), երկկզականի (5, 141), երվանդական (5, 13), ըմբշարան (12,220), և այլն:

Հ. Խաչատրյանը եռարմատ բարդությունները կազմել է բառարաններում առկա երկարմատ բարդություններից, օրինակ՝ *այբուբենակիր* (3,97) նորակազմությունը կերտվել է *այբուբեն* բառին *կիր* արմատի կցումով: Այս ձևով են կազմվել նաև հետևյալ բառերը՝ *ակնթարթ*ածին (2,202), *բազմաթել*ափունք (5,318), *բանաստեղծ*աքայլ (5,173), *գետանց*աքար (5,239), *գրգռ*ահոտ (ախորժելի հոտ ունեցող) (4,65), *երկրաշարժ*ասաստ (4,48), ինքնա*երկրպագում* (5,79), ինքնա*թագադրվել* (4,35), ինքնա*թագադրում* (12,262), ինքնա*հաղթահարել* (5,331), ինքնա*հայտնագործում* (4, 54) և այլն:

Արժանապատվապահ (4,36) բառը հեղինակը կազմել է *արժանապատիվ* և *պատվապահ* բառերից՝ *պատիվ* բաղադրիչի ամփոփմամբ: Նույն ձևով է կազմվել նաև *եղջերափողականչ* (5, 411) բառը:

Հ. Խաչատրյանը մի շարք նորակազմություններ կերտել է արդի լեզվում գործածվող որոշ բառերի նմանությամբ, ինչպես՝ *անրջամույն* (2,172) բառը կազմել է *անրջաստյգ* -ի նմանությամբ: Նույն տիպի են նաև հետևյալ բառերը՝ արքաընծա (5,243) - արքայատուր, գազպենատու (6,44) - գազպենաբեր, գահատուն (1,386) -արքայատուն, գարնանավարտ (1,365) - գարնանավերջ, զանազանաթույր (1, 251) - զանազանագույն, հանդերձափոխվել (2,8) - զգեստափոխվել, զմրուխտաթույր (1,350) - զմրուխտագույն, թորգոմազուն (11, 143) - հաբեթածին, հրոսակազորք (4,23) – հրոսակախումբ, ճերմակագեղմ (8,147) - ճերմակաբուրդ, պերճահանդերձ (5,97) – պերճազգեստ և այլն:

Ակնհայտորեն այստեղ կատարվել է հոմանիշ կամ իմաստային որևէ առնչություն ունեցող բաղադրիչների փոխարինում: Հետևյալ նորակազմություններում

հեղինակն արդի լեզվում գործածվող բառի ածանցը փոխարինել է արմատով կամ բառով՝ խրախճանարան- խրախճանատեղի (3,30), կրթարան – կրթատուն (3,94),ձիարշավարան-ձիարշավատեղի(12,183),նժույգավոր–նժույգավար (5,9):

Հ. Խաչարյանի կերտած բառերով կարելի է կազմել հոմանշային զույգեր, օրինակ՝ գինարբուքարան (5,48) – խնջույքարան (3,93), գուշակարան (2,74) - գուշակավայր (2,170), միաստվածասեր (2,19) – միաստվածապաշտ (1, 253): *Հայագահ, հայիշխան* հոմանիշները գործածված են նույն նախադասության մեջ և ծառայում են իմաստի սաստկացմանը.«- Փորձեցի համայն Հայոց աշխարհը *հայագահ* ու *հայիշխան* դարձնել, չհաջողվեց» (3, 245):

Հարսնախումբ (5,131) և *հարսնաբերախումբ* (4,41) նորակազմություններն ունեն իմաստային այն տարբերությունը, որ առաջինը նշանակում է *հարսին ուղեկցող, նրա մերձավորներից կազմված խումբ*, իսկ երկրորդը՝ *փեսայի մերձավորներից կազմված, հարսին բերող խումբ*:

Հ. Խաչատրյանը մի շարք նորակազմություններ կերտել է տեքստում նրանց հետ գործածված և իմաստային անմիջական կապ ունեցող բառերի նմանությամբ:[2] Օրինակ՝ *բերքաբեր* նորակազմությունը կերտվել է *բերքակործան* բառի նմանությամբ, և այստեղ ակնառու է նշված բառերի ունեցած հակադրական իմաստը. «- Սա Հայոց աշխարհն է, հայրապետ, ամպը կարող է մեկ *բերքակործան* կարկուտ դառնալ, մեկ՝ *բերքաբեր* անձրև»(2,134): *Գուսանավետ* նորակազմությունը կերտվել է *գինեվետ* բառի նմանությամբ և վերջինիս հետ տեքստում ծառայում է Գողթն գավառի բնութագրությանը. «Այսպես էլ *գինեվետ* Գողթնը դարձավ *գուսանավետ* գավառ, գուսանների օրրան» (5,43): *Թագասիրություն* բառը կազմվել է *հայրասիրություն* բառի համաբանությամբ և բնութագրում է արքայազն Արտավազդին. «Գահի ու թագի փոխանորդը մշտապես հոր կողքին էր: Դա ոչ թե *հայրասիրությունից* էր, այլ՝ *թագասիրությունից*» (1,286): *Ձայնատուն* նորակազմությունը կերտվել է *գանձատուն* բառի նմանությամբ: Երվանդ Ժպտացողի անունը կրող ձորում ձայնի արձագանքը յուրահատուկ է, որն էլ հիմք է դրել այն առասպելին, թե իբր քրմապետը ձորի բոլոր անձավները լցրել է իր ձայնով. «Սա Երվանդ Ժպտացողի տիրույթն է, նրա

---

[2] Ս. Էլոյանը այս տիպի նորակազմություններն անվանում է *համատեքստի բառային միջավայրով պայմանավորված նորակազմություններ* (19,207) և հակադրում *համատեքստի ներքին իրադրությամբ պայմանավորված նորակազմություններին*.

ծայնատունը: Դե ինչ, արքաները *գանձատուն* են ունենում, այս քրմապետն էլ *ծայնատուն* է ունեցել»(5,447):

Հետևյալ նորակազմությունները ևս կերտվել են նույն սկզբունքով և ունեն դիպվածականության երանգ: *Ամենինչական* բառը կազմվել է *հայկական*-ի նմանությամբ և նախադասության մեջ նրան հակադիր իմաստ ունի.«Ամեն ինչով նա (Վիլլեբրանդ Օլդենբուրգցի – Շ.Ս.) կարող էր ներկայանալ որպես հայ: Խանգարում էր միայն տափակ քիթը, որը կարելի էր անվանել *ամենինչական*, բայց ոչ *հայկական*»(10,156): *Եվայլունի* նորակազմությունը, որը հատկանշվում է բառախաղի արհամարհական երանգներով, կերտվել է *Երվանդունի* բառի համաբանությամբ. «- Ո՞չ *Երվանդունի* կա, ո՞չ էլ՝ *Եվայլունի*, կա միայն Հայկա-զունի, Հայկազյան զարմ» (5, 385) և այլն:

Հ. Խաչատրյանը կերտել է նաև հատուկ անուններից(մեծ մասամբ պատմական) բաղադրված նորակազմություններ: Դրանցից են՝ ալիծագիր (մատյաններ ընդօրինակող Ալիծի կողմից գրված)(10,275), անդրհայքյան (5,407), անհաղող (4,113), անհապաշտպան (4,244), բարկայապաշտ (Բարկա աստծուն պաշտող) (1,43), բյուզանդահպատակ (10, 6), բյուզանդամետ (10,152), բջնհատիպ (4,127), գողթանավետ (6,169), երասխամերձ (5,403), երվանդական (5,13), եփրատահայաց (12, 202), զվարթնոցատիպ (4,45), թորոսական (10, 20), լևոնածին (10,167), լևոնական (10,217), լևոնանուն (10,456), կեռանածին (10, 308), կյուրոսածին (5, 238), կյուրոսասիրություն(5,295), կրեսոսապատկեր (5, 193), հռոմեակուլ (1,156) և այլն:

Զորավարների անուններից բաղադրված նորակազմությունները հեղինակը գործածում է այդ անձանց հրամանատարության տակ եղած զինվորականներ նշելու համար, ինչպես՝ բագարատական (7,301), թորոսական (10,20), լուկուլլոսական (7,274), կլոդիոսական (7,591), կյուրոսական (5,162), կրասոսական (12, 42), հաննիբալական (1,57), մեհրուժանական (7,115), պոմպեոսական (7,590), սեքստիլիոսական (7,302), վասակական (4,143) և այլն: Նշենք մի քանի օրինակներ. «*Թորոսականները* այնպիսի արագությամբ ու հնարամտությամբ տիրացան Կիզիստրա-Կնդռոսկավիսին, որ ոչ մի ամրոցա-պաշտպան ոչ դիմակայեց, ոչ էլ կարողացավ դուրս գալ այնտեղից» :«Շուտով նա խառնեց *պոմպեոսականներին* ու *կլոդիոսականներին*: Հարվածում էր, ով դեմն էր գալիս»: «*Վասակականները* հետապնդեցին նահանջողներին և սկսե-ցին անխնա կոտորել նրանց»:

Ինչպես բերված օրինակներից երևում է, Հ. Խաչատրյանը ևս նորակազմությունները գործածել է ասելիքը յուրատիպ ներկայացնելու համար: Նա ձգտել է նորակերտ բառերով պատկերել իրականությունն իր բազմազան կողմերով: Սրա համար նա կերտել է մի շարք նորակազմություններ, որոնք արտահայտում են առարկա, հասկացություն: Օրինակ՝ անտառահարկ (հարկ՝ անտառի բարիքներից օգտվելու համար) (11,207), գլորաքար (12,203), գրքահեն (8,118), դարեզր (12,188), դատաժողով (3,29), դիադաշտ (3,13), դիտաբոլորակ (8,189), դիտավրան (1,353), երգետոն(12,66), զորախուց (1,311), ժայռահատված (3,146), կանթեղափունջ (1,85), կենսամատյան (կյանքի մասին մատյան) (9,84), կողոպտազորք (5,95), հաղթապար (3,41), հացայր (ցորեն պահելու համար նախատեսած քարանձավ) (6,106) և այլն:

Մեծ մասամբ ստեղծագործելով պատմական անցյալի վերաբերյալ՝ Հ. Խաչատրյանը պատմական միջավայրը ներկայացնելու համար նաև գործածել է վերոհիշյալ հեղինակային նորակազմությունների մի մասը, որոնք նույնպես արտացոլում են անցյալի իրականությունը: Այդպիսի բառերից են՝ աղեղնազորք (աղեղնավորներից կազմված զորք) (1,91), արքայադահլիճ (7,91), արքայազնամայր (7,15), բաբանագործ (7,212), բերդապաշտպան (7,189), գահակող (1, 371), գուսանախմբություն (2,152), դիցավան (1,12), երկաթանետ (5, 216), թագաքանդակ (7,603), կառքածածկոց (5,124), հեծելաջոկատ (1,88) և այլն:

Նյութի պատմական երանգն ապահովելու նպատակով Հ. Խաչատրյանը կազմել է նաև այնպիսի կառույցներ, որոնց կազմում կան հնաբառեր կամ հնացած իմաստով գործածված բառեր: Օրինակ՝ *զարմ* (տոհմ), *կուծ*(մարմար) հնաբառերով հեղինակը կազմել է *արիազարմ* (1,9), *հնազարմ* (10,348), *կծակերտ* (10, 95) , *կծահանք* (10,96) նորակազմությունները: Իսկ հետևյալ կառույցներում կան հնացած իմաստով գործածված բառեր, ինչպես՝ *ահագնականչ* (1, 235) նորակազմության մեջ հնացած իմաստով է գործածվել *ահագին* (վտանգ պարունակող) բառը: *Երկբյուրանոց* (3,32) կառույցում *բյուր-* ը գործածվել է *տասը հազար* իմաստով: *Զորագնացք* (1,344) նորակազմության մեջ *գնացք* –ը գործածված է *ընթացք* իմաստով, իսկ կառույցը նշանակում է *զորքի ընթացք* : *Գեղանամակ* (12,144) կառույցում նույն բնույթն ունի *նամակ* (ցուցակ) բառը, իսկ նորակազմ բառը նշանակում է *գեղեցկուհիների ցուցակ: Նավ* բառը *գինենավ* (7, 68) կառույցում ևս գործածված է հին իմաստով՝ *ջրատար խողովակ*, իսկ նորակազմությունը նշանակում է *գինու խողովակ*.

Տեսիլ բառը *տեսք* իմաստով է գործածված *կախարդատեսիլ* (11,121) նորակազմության մեջ:

Հ. Խաչատրյանը նորակազմությունները գործածել է նաև տեքստին արտահայտչականություն հաղորդելու համար: Այդպիսի նորակազմություններից են. «Ասպետ Սահակ Բագրատունու կապարճակիրը Բախտատուրի մոտ է հանդիպել Թեժին՝ նախարար Գադիշո Խորխոռունու *այծյամավիզ* և գեղապաճույճ գեսով դստերը»(2,80): «Մովսեսը վերածնեց Կատարի գրածը և օլիմպիական մրցումների հաղթող, *առյուծասատ* բռնցքամարտիկ Արտավազդի մասին մատենագրեց այսպես...»(2,209): «Հայերենն է, որ *բանաստեղծաքայլ*, *հաճճարաքայլ* և *հավերժաքայլ* է դարձնում մեր ժողովրդի գնացքը դեպի գալիք հեռաստանները»(5,173): «Խաչ նշանակում է նաև եկեղեցի: Դա *քրիստոնեաշունչ* բառ է»(9,154) և այլն:

Հ. Խաչատրյանը նորակազմությունները գործածել է նաև սեղմ, հակիրճ խոսք կառուցելու համար: Օրինակ՝ Լևոն անունով արքաների մասին խոսելիս հեղինակը գործածում է *լևոնանուն* նորակազմությունը՝ *Լևոն* բառը ամեն անգամ չնշելու համար. «Նրանք՝ քաջ Թորոսները, Գող Վասիլը, ծուռ Մլեհը, Լևոն Մեծագործն ու *լևոնանուն* մյուս արքաները...»(10,456): *Քառաթագ* նորակազմությունը նշանակում է *չորս թագ ունեցող, չորս ինքնուրույն մասի բաժանված*. «*Քառաթագ* հայաշխարհում՝ Մեծ Հայքում, Փոքր Հայքում, Ծոփքում և Կոմմագենեում, հայերն ամենից շատ պաշտում են արգասավորության և մայրության աստվածուհի մեծն տիկին Անահիտին»(1,292): *Օձերով պատած բլուր* բառակապակցության փոխարեն հեղինակը գործածում է *օձաբլուր* նորակազմությունը. «Մարդիկ երկյուղից չէին մոտենում *օձաբլրին*» (13,295): Նման սկզբունքով են կազմվել նաև *արքայապատում, հացապատում, մանկագիտարան, յոթնախոր-հուրդ, նոյապատում* նորակազմությունները, որոնք նաև գրքերի վերնագրեր են:

Ինչպես քննարկված օրինակներից երևում է, Հ. Խաչատրյանի կերտած նորակազմություններում կան նաև դիպվածական բառեր, որոնք առաջին հայացքից ոչ սովորական, արտառոց կապակցություններ են: Հեղինակը սրանք կազմել ու գործածել է միտքն ընդգծելու, ընթերցողի ուշադրությունը տվյալ երևույթի վրա գրավելու համար: Օրինակ՝ *արևասպան* և *լեզվասպան* նորակազմությունները հեղինակը գործածում է յուրաքանչյուր մարդու համար մայրենի լեզվի կարևորությունը շեշտելու նպատակով.«Մայրենին յուրաքանչյուր մարդու հոգու արևն է, որ խոհականության լույս ու ավիշ է ներարկում

նրա ողջ էությանը: Այդ արևն աշխարհ է գալիս բոլոր նորածինների հետ: Իսկ նա, ով չի ուզում զավակ ունենալ, *արևասպան* ու *լեզվասպան* է»(5,172): Նշված բառերի ոչ սովորական կապակցություն լինելու պատճառն այն է, որ խոսքում *արև, լեզու* գոյականներն ու *սպանել* բայը սերտ առնչակցություն չունեն: *Գրիգորապաշտություն* նորակազմությունը հեղինակը գործածում է Պահլավունիների տոհմում *Գրիգոր* անունը հաճախակի գործածելու փաստն ընդգծելու համար. «Հայկական ուրիշ ոչ մի տոհմ չէր կարող հպարտանալ այդպիսի *գրիգորապաշտությամբ»* (4,22): Ոչ սովորական է նաև մարդու անվան և ազգանվան արժեքով մականվանը ածանց կցելով՝ ածական ստանալը: Այդպիսի կառույց է *ներսեսլամբրոնացիական* նորակազմությունը. »Արքայի սիրտը հողին հանձնելու ժամանակ Գրիգոր Սկևռացու խոսքը դարձավ հնչեղ, ազդու, *ներսեսլամբրոնացիական«* (10,178): *Ներսիսափայլ* կառույցը կազմված է *Ներսես* և *փայլ* բառերից, որոնք նույնպես բառակազմական տեսակետից անհամատեղելի են: Նշված նորակազմությունը նշանակում է *Ներսես Աշտարակեցու հիմնադրած այգու ծառերից արված կրակի փայլ ունեցող.* «- Ես օրհնում եմ *ներսիսափայլ* խարույկները, որոնք ջերմաց-նում են բնահան եղած մեր արյունակիցների մարմինները»(11,177): Այստեղ հեղինակը նաև ձգտել է խոսքը հնարավորին չափ սեղմելուն, որի պատճառով էլ նշված նորակազմության իմաստը տեքստից դուրս ըմբռնելն անհնար է:

Կերտելով մեծ մասամբ հաջող ու հետաքրքիր բառեր՝ Հ. Խաչատրյանը հարստացրել է ոչ միայն իր երկերի (պատմավեպ, գրական պատում) լեզուն, այլև զգալի աշխատանք է կատարել արդի լեզվի բառապաշարի զարգացման ասպարեզում:

ԹՎԱԳՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան Հ., Արտաշես, Եր., 1980թ.:
2. Խաչատրյան Հ., Քերթողահայրը, Եր., 1985թ.:
3. Խաչատրյան Հ.,Վաչագան, Եր., 1998թ.:
4. Խաչատրյան Հ., Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը, Եր., 1999թ.:
5. Խաչատրյան Հ., Երվանդ Սակավակյաց, Եր., 1989թ.:
6. Խաչատրյան Հ., Հացապատում, Եր., 1984թ.:
7. Խաչատրյան Հ., Տիգրան Մեծ, Եր., 1990թ.(վերահրատ.):
8. Խաչատրյան Հ., Խաշխաշ, Եր., 1987թ.:
9. Խաչատրյան Հ., Հայոց հնօրյա զվարճախոսները, Եր., 1998թ.:
10. Խաչատրյան Հ., Կիլիկյան Հայաստանի երևելիները, Եր., 2001թ.:
11. Խաչատրյան Հ., Սոսյաց անտառ, Եր., 1988թ.:.
12. Խաչատրյան Հ., Արտավազդ, Եր., 1975թ.: